ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
7. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ռուս-ուկրաինական հակամարտությունը և ՌԴ նկատմամբ կիրառվող սանկցիաները ՀՀ տնտեսության վրա կարծես թե ունենում են դրական ազդեցություններ՝ սպասված բացասականի փոխարեն: Տնտեսական ակտիվության ցուցանիշն ընթացիկ տարվա փետրվարին որոշակի դանդաղելուց հետո մարտին էլ ավելի է դանդաղել՝ կապված արտահանման լոգիստիկ խնդիրների հետ, սակայն ապրիլ և մայիս ամիսներին ցուցաբերում է արագացման միտում: Այսպես, մայիսին ՏԱՑ-ը նախորդ տարվա մայիսի համեմատ կազմել է 13%՝ ապրիլի համապատասխան ցուցանիշից արագանալով շուրջ 4.2 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 10.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2022թ. հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.2 և 3.3 տոկոսային կետ: Արդյունաբերության և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 0.7 և 0.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-մայիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը[1], %



Արդյունաբերության ոլորտի ցուցանիշները էականորեն հետ են մնում տնտեսության մյուս հատվածներից: Արդյունաբերության ոլորտի իրական թողարկումը 2022թ. մայիսին աճել է ընդամենը 2.0%-ով: Այդ պայմաններում,

[1] Արդյունաբերության նախորդ ամիսների ցուցանիշը վերանայվել է ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսներին աճի ցուցանիշը դարձել է 3.4%՝ նախկինում հրապարակված 3.1%-ի փոխարեն, իսկ հունվար-ապրիլինը՝ 2.9%՝ 2.6%-ի փոխարեն:

արդյունաբերության կուտակային աճի տեմպի դանդաղումը շարունակվել է՝ հունվար-մայիսին կազմելով 2.7%՝ հունվար-ապրիլի 2.9%-ի դիմաց:

2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալներով[2] արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 10.1% աճով (տեմպը շարունակել է դանդաղել շուրջ 0.8 տոկոսային կետով), որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 5.7 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է 12.3% անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 3.4 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ծավալների աճի տեմպը շարունակել է արագանալ: Շինարարության աճն ընթացիկ տարվա մայիսին կազմել է 18.1%՝ ապրիլի համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով: Հունվար-մայիս ամիսների շինարարության աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 11.4%: Հատկանշական է, որ աճի արագացում է նկատվում նախորդ տարվա զգալիորեն մեծ բազայի համեմատ, ինչը նշանակում է, որ շինարարության ոլորտում առկա է էական ակտիվություն:

[2] 2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների աճի տեմպը շարունակել է արագանալ՝ պայմանավորված ՌԴ-ից ժամանողների քանակի աճով: 2022թ. տարեսկզբից ծառայությունների աճի տեմպը բավական բարձր է եղել, որը փետրվարին փոքր-ինչ դանդաղելուց հետո շարունակել է արագանալ՝ մարտից սկսած: Մայիսին ծառայությունների աճը կազմել է 30.2%՝ ապրիլի համեմատ արագանալով 3.1 տոկոսային կետով, իսկ հունվար-մայիս ամիսների աճը կազմել է 24.9%՝ արագանալով 1.4 տոկոսային կետով: Ծառայությունների աճին էականորեն նպաստել են ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ սանկցիաների հետևանքով ՀՀ ժամանող ռուսաստանցիները, ովքեր ներկայացնում են բավական վճարունակ պահանջարկ:

2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալներով[3]՝ ծառայությունների աճը առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տրանսպորտ» և «տեղեկատվության և կապ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.6, 4.9 և 4.8 տոկոսային կետ:

[3] 2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես որոշակիորեն արագացել է՝ պայմանավորված ՌԴ քաղաքացիների ներհոսքի աճով: 2022թ. մայիսին առևտրի աճի տեմպը կազմել է 12.4%՝ ապրիլի 8.6%-ի դիմաց արագանալով 3.8 տոկոսային կետով: Հունվար-մայիս ամիսների առևտրի աճի տեմպը ևս արագացել է՝ կազմելով 8.9%: Առևտրի ոլորտը նույնպես իր վրա կրել է ՌԴ-ից ՀՀ ժամանողների դրական ազդեցությունը:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ[4], %



[4] ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար ամսվա ցուցանիշը նախկինում հրապարակված 53.5%-ից դարձել է 51.9%, իսկ հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշը՝ 25.2%-ից դարձել է 25.8%:

Ապրանքների արտահանման ծավալների աճը էապես արագացել է, ինչը համահունչ չէ արդյունաբերության աճին: 2022թ. մայիսին արտահանման աճը կազմել է 33.7%՝ ապրիլի համեմատ արագանալով շուրջ 11.9 տոկոսային կետով: Արտահանման աճի տեմպի նմանատիպ արագացումը կարող է պայմանավորված լինել վերաարտահանման երևույթով: Այսինքն՝ որոշ ապրանքներ ներմուծվում են Հայաստան և վերաարտահանվում: Այսպիսի ենթադրության համար հիմք կարող է հանդիսանալ մի կողմից այն, որ արդյունաբերության աճը բավական ցածր է, ինչը ցույց է տալիս, որ ՀՀ-ում այդքան արտադրանք չի արտադրվում, մյուս կողմից այն, որ էապես արագացել է նաև ներմուծման աճը:

2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալներով[5]՝ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 56.4% և 64.3% աճերով, որոնց նպաստումները կազմել են 6.5 և 6.2 տոկոսային կետ: Արտահանմանը էական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճերը՝ համապատասխանաբար 3.0 և 2.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ[6], %



Ներմուծման ծավալների աճի տեմպը նույնպես էականորեն արագացել է: 2022թ. մայիսին ներմուծման աճը կազմել է 52.8%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով ավելի քան երկու անգամ: Հունվար-մայիս ամիսների աճի ցուցանիշը

[5] 2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

[6] ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսներին հրապարակված ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար ամսվա աճի ցուցանիշը նախկինում հրապարակված 67.3%-ից դարձել է 67.4%, հունվար-փետրվարի ցուցանիշը 60.5%-ից դարձել է 60.3%, իսկ հունվար-ապրիլի ցուցանիշը 39.1%-ից դարձել է 39.0%:

նույնպես էականորեն արագացել է՝ հասնելով 42.2%-ի՝ նախորդ ամսվա 39.0%-ի դիմաց: Ներմուծման աճի տեմպն էականորեն գերազանցում է արտահանման աճին, ինչը նշանակում է, որ առևտրային հաշվեկշիռը (արտահանման և ներմուծման տարբերությունը) շարունակում է վատթարանալ:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-ապրիլ ամիսների տվյալներով[7]), որոնցից առավել նշանակալի է եղել «հանքահումքային արտադրանք», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 6.7, 5.2, 4.7 և 3.6 տոկոսային կետ դրական նպաստում:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022թ. հունվար-ապրիլին անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակել է մնալ բարձր[8], սակայն գնաճի արագացման պայմաններում իրական աշխատավարձի աճը դանդաղել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 9.7%-ով՝ կազմելով 213,858.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.1%-ով և կազմել 173,853.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 11.2%-ով՝ կազմելով 231,960.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին մակարդակն աճել է 7.4%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձի աճը կազմել է ընդամենը 2.1%՝ նախորդ ամսվա ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

[7] 2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

[8] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մայիսի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-ապրիլին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում), և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





2022թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է եղել նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-մայիսին արժևորվել է շուրջ 9.7%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 19.9%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներին դանդաղել է՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-մայիսին կազմել 14.7%:

ՀՀ դրամի արժևորումը շարունակվել է նաև հունիսին՝ հասնելով պատմական նվազագույն մակարդակների: 2022թ. հունիսի 24-ին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական փոխարժեքը կազմել է 409 դրամ, որը գտնվում է վերջին 10 տարիների նվազագույն ցուցանիշի մակարդակում: Բնականաբար, նման ցածր փոխարժեքը էական խնդիրներ է առաջացնում ինչպես ապրանքներ և ծառայություններ արտահանողների, այնպես էլ տեղական արտադրողների համար, ովքեր խնդիր ունեն մրցակցելու ներմուծվող ապրանքների հետ:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. ընթացքում



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[9]

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը մնում է բարձր մակարդակում: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-մայիսին աճել են 24.0%-ով՝ նախորդ ամսվա 23.7%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 23.2%՝ մնալով նախորդ ամսվա մակարդակում: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-մայիս ամիսներին աճել են շուրջ 39.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 54.0%-ով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է շահութահարկի (աճը՝ 55.1%), ավելացված արժեքի հարկի (աճը՝ 18.3%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.5 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 8.2, 5.9 և 5.5 տոկոսային կետ:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսատուրքերի ստացման հետ կապված խնդիրները (տեխնիկական խնդիրների պատճառով ԵԱՏՄ ընդհանուր «կաթսայից» մաքսատուրքերը ՀՀ-ն չի ստանում) դեռևս առկա են, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսներին մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են շուրջ 56.7%-ով՝ ընդհանուր հարկերի աճին հակազդելով շուրջ 3.1 տոկոսային կետով:

[9] Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-մայիս		2022թ. հունվար-մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**5.9**	**5.9**	**23.2**	**23.2**
ԱԱՀ	9.5	3.0	18.3	5.9
Շահութահարկ	-3.0	-0.5	55.1	8.2
Եկամտային հարկ	0.4	0.1	6.1	1.7
Ակցիզային հարկ	-18.4	-1.4	11.9	0.7
Շրջանառության հարկ	-1.8	0.0	28.3	0.6
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	13.5	0.4	61.1	2.0
Մաքսատուրք	38.9	1.6	-56.7	-3.1
Սոցիալական վճար	85.3	1.4	43.8	1.2
Այլ հարկային եկամուտներ	73.8	1.2	18.1	0.5
Պետական տուրք	4.5	0.1	251.0	5.5

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրանց բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճն էականորեն զիջել է եկամուտների աճին: 2022թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են շուրջ 4.8%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը բավական ցածր է եղել՝ կազմելով 3.5%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 18.1%-ով՝ կազմելով 77.6 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակել է մնալ հավելուրդային: 2022թ. հունվար-մայիս ամիսներին կառավարության կողմից հավաքագրված եկամուտներն էականորեն գերազանցել են ծախսերի ծավալը, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 46.3 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 74.8 մլրդ դրամ պակասուրդ: Հետևաբար, դրա համեմատ հավելուրդային բյուջեն էական զսպող ազդեցություն է ունենում տնտեսական ակտիվության վրա:

5.4. Պետական պարտք

2022թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,580.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ աճելով 8.7%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 9,075.4 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 9.1%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 3.6%-ով:

Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 3.5%-ով կամ 307.4 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Վերջին ամիսներին ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողնելու պայմաններում պետական պարտատոմսերի տոկոսադրույքները ևս էական աճ չեն գրանցել, սակայն մնացել են բարձր մակարդակում: Կարճաժամկետ տոկոսադրույքները մնացել են 10.4%-ի սահմաններում, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 11.2%:

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը շարունակում է արագանալ՝ հասնելով աննախադեպ մակարդակի: Մայիսին գնաճի տեմպը կազմել է 9.0%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով: Ընդ որում, նախորդ ամիսներին գնաճը նույնպես մեծ քայլերով էր արագացել: Ըստ ՀՀ ԿԲ-ի հաղորդումների՝ գնաճի տեմպը առաջիկա ամիսներին կշարունակի արագանալ, սակայն մինչև տարեվերջ կկայունանա 8%-ից բարձր մակարդակում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. մայիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը նախորդ ամիսներին դանդաղելուց հետո կտրուկ արագացել է: 2022թ. մայիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 8.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.7 տոկոսային կետով: Ավանդների աճն ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 12.6% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 2.9%-ով՝ նախորդ ամսվա 10.6%-ի համեմատ:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին շուրջ 4.6 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 10.0% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը կազմել է 22.1%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 4.0 տոկոսային կետով:

6.3. Վարկեր

2022թ. մայիսին վարկերի աճը տարվա մեջ առաջին անգամ դրական է եղել: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 1.2%-ով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 6.0%-ով և ընդհանուր վարկերին ունեցել են 0.3 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են 1.7%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են 1.6 տոկոսային կետ դրական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 7.8% աճով, մինչդեռ իրավաբանական անձանց վարկերը շարունակում են նվազել:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի[10] ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.5 և 1.5 տոկոսային կետով դրական նպաստում: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճն արագացել է վերջին ամիսներին՝ մայիսին կազմելով 13.6% և ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.7 տոկոսային կետով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքները ՀՀ տնտեսության վրա դրական միտումներ են ստանում, որոնք, սակայն, կարող են ժամանակավոր լինել: Տնտեսական ակտիվության ցուցանիշն էականորեն արագացել է մայիսին՝ դառնալով երկնիշ: Այսպիսի դրական զարգացումների պատճառը հիմնականում առևտրի և ծառայությունների աճն են, որոնք էլ իրենց հերթին պայմանավորված են ՌԴ-ից ՀՀ ժամանող և վճարունակ պահանջարկ ունեցող անձանց թվաքանակի կտրուկ աճով: Սակայն, այս գործոնը կարող է

[10] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

ժամանակավոր լինել և իրավիճակի փոփոխության հետ արագ փոխվել հակառակ ուղղությամբ:

2. Արտահանման աճը զգալիորեն արագացել է, սակայն չի համապատասխանում տնտեսական այլ ցուցանիշների աճերին: Այսպես, 2022թ. հունվար-մայիսին ապրանքների արտահանումն աճել է 27.5%-ով, սակայն արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 2.7%: Դա նշանակում է, որ արտահանման աճը կապված չէ ՀՀ-ում ապրանքների արտադրության աճի հետ, հետևաբար առկա է վերաարտահանման երևույթ որոշ ապրանքների մասով՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակում կիրառվող պատժամիջոցներով: Դրա մասին է խոսում նաև ներմուծման ավելի քան 42% աճը: Այս երևույթը վտանգավոր է, քանի որ իրավիճակի փոփոխության դեպքում և՛ արտահանումը, և՛ ներմուծումը կտրուկ կնվազեն:

3. ՀՀ կառավարությունը շարունակում է իրավիճակին հետևել դիտորդի կարգավիճակով: ՌԴ քաղաքացիների, ինչպես նաև ՌԴ-ից կապիտալի ներհոսքը դեպի Հայաստան էական ազդեցություն է ունենում ՀՀ տնտեսության վրա, սակայն կառավարությունը որևէ գործողություն չի իրականացնում: Այսպիսի շոկի պայմաններում անհրաժեշտ է մի կողմից՝ բարելավել ՀՀ-ում աշխատել ցանկացող SS ոլորտի մասնագետների համար պայմանները, մյուս կողմից՝ չեզոքացնել տնտեսությունում որոշ ոլորտների (օրինակ՝ վերաարտահանման) գերաճը՝ հարկաբյուջետային գործիքների օգնությամբ: Նման գործողությունները կօգնեն իրավիճակից առավելագույն օգուտ քաղել՝ միաժամանակ պատրաստվելով իրավիճակի փոփոխությանը:

4. Գների աճի արագացումը շարունակում է մնալ սոցիալ-տնտեսական իրավիճակը վատթարացնող և անորոշությունները մեծացնող գործոն: Գների աճի տեմպը մայիսին հասել է 9.0%-ի և կանխատեսվում է, որ հետագա ամիսներին կարող է շարունակել աճել: Բարձր գնաճը հանգեցնում է բնակչության սոցիալական խնդիրների սրմանը՝ իրական եկամուտների կրճատման արդյունքում: Բարձր գնաճի պայմաններում տնտեսավարողները ստիպված են լինում ճշգրտել աշխատավարձերը դեպի վեր, ինչը, սակայն, ՀՀ-ում տեղի է ունենում գնաճից ցածր տեմպերով:

5. Վերջին ամիսներին էականորեն արժևորվել է ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, ինչը կհանգեցնի ՀՀ ապրանքների գնային մրցունակության նվազմանը արտաքին շուկաներում: Տարեսկզբի համեմատ, ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 15 տոկոսով, ինչն էապես նվազեցնում է արտահանվող ապրանքների մրցունակությունը արտաքին շուկաներում, հետևաբար բացասաբար է ազդում ՀՀ արտահանման վրա: Բացի

այդ, արժևորված փոխարժեքի պայմաններում, ՀՀ ներքին արտադրողները չեն կարող մրցակցել նաև ներմուծողների հետ, ինչը կհանգեցնի տեղական արտադրանքի փոխարինմանը ներմուծվողով: Հետևաբար, փոխարժեքի նման մակարդակի պահպանումը միջնաժամկետում էական վնասներ կհասցնի տնտեսությանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*